«Կառավարութեան առջև կանգնած երկրորդ կարևոր խնդիրը հաշտութիւն կնքելն է։ Այն հանգամանքը, որ նոր կառավարութեան գլուխը նախկին հաշտարար պատուիրակութեան նախագահն է՝ ինքնին ասում է, որ նոր կառավարութեան կը ներկայացուեն շատ խիստ պահանջներ։ Տրապիզոնից վերադարձած պատուիրակութիւնը լի էր հաւատով, թէ կարելի է կնքել հաշտութիւն, որը կը փրկէ Անդրկովկասը։ Պատուիրակութիւնը ոչ միայն հաւատով վերադարձաւ, այլ իր այդ հաւատը ներշնչեց նաև դանդաւածներին։ Այդ պարտաւորեցնում է ոչ միայն պատուիրակութեան, այլ և կառավարութեան. այդ մուրհակով կառավարութիւնը ստիպուած կը լինի հաշիւ ներկայացնել»։

Հայերը համոզուած էին, որ թիւրքերի հետ անկարելի է տանելի հաշտութիւն կնքել, և այդ համոզումն էր Կարճիկեանի խիստ զգոյշ ճառի իմաստը։ Նա չէր հաւատում, որ Չխենկելիին կը յաջողուի կատարել իր խոստումը, մանաւանդ որ տեսնում էր շուրջը գտնուող մահմետական գործիչների մտայնութիւնը։ Զէ՞ որ նոյն նիստում սոց.-յեղափ. Լորդկիպանիձէն, Սէյմի ամբիոնից, յայտարարում էր, թէ՝ «ոմանք այստեղ, ա՛յս դահլիճում, Սէյմի պատգամաւորների շարքերում ու լրագրողների օթեակում, արդէն խօսում են այն մասին, թէ՝ քանի որ անկախութիւնը յայտարարուած է, պէտք է օգնութեան կանչել թիւրքական զօրքերին և թիւրք սուիններով պաշտպանել Անդրկովկասի անկախութիւնը հիւսիսից արշաւող բոլշեւիկների դէմ»։

Այո՛, խօսում էին, և հէնց Ռասուլ Զադէն իր ճառում շատ թափանցիկ ակնարկներով հրաւիրում էր Սէյմի ուշադրութիւնը Սուխումի և Բաքուի վրա, որոնք «տառապում էին ինքդինքը խորհրդային իշխանութեան դաղափարների ջատագով համարող աւազակների լծի տակ»։

Այսպէս, ուրեմն, պաշտօնապէս Չխենկելիի կառավարութիւնը սկսեց գոյութիւն ունենալ ապր. 13-ից, բայց ապր. 9-ից արդէն Գեղեչկորիի դահլիճը, բոլորովին ապօրինի կերպով և աննկարելի անփութութեամբ, քաշւել էր գործից և իշխանութեան ղեկը փաստօրէն անցել էր Չխենկելիի ձեռքը։ Այս վերջինը անմիջապէս անցաւ գործի և արաւ մի շարք ինքնագլուխ քայլեր։

Ապր. 10-ին Չխենկելին հեռագրով իմացրեց բոլոր պետութիւններին Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը։ Ապա Փոթիի ու Բաթումի գծով նոյնը հեռագրեց և Վեհիբ փաշային՝ աւելացնելով, որ Անդրկ. Սէյմը ընդունել է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և որ ինքը կարգադրել է բոլոր ճակատների հրամանատարներին՝ կանգնեցնել պատերազմական գործողութիւնները և նոյնը խնդրում է նաև թիւրք հրամանատարութիւնից։ Չխենկելին աւելացնում էր, որ ինքը հրաման է տուել, որ Կարսի պարպման պայմանները մշակելու համար բերդապետը պատուիրակներ ուղարկէ թիւրք հրամանատարութեան մօտ, և խնդրում էր տալ բաւարար ժամանակ, որպէսզի կարելի լինի պարպել բերդը։

Յետոյ, հայկական և վրացական կորպուսների պետերին, զինուորական նախարարի պաշտօնակատար զօր. Օղիշելիձէի միջոցով, արաւ հետեւեալ հեռագրական հրամանը. «Հաղորդում եմ ի գիտութիւն ձեր, որ Անդրկ. Սէյմը իր 9 ապրիլ նիստում յայտարարեց Անդրկովկասի կատարեալ անկախութիւնը։ Կազմուած է նոր կառավարութիւն Չխենկելիի գլխաւորութեամբ,